II

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ՔՆՆԱԴԱՏ

ԱՐԾՎԻ ՀՈՒՆԱՆՅԱՆ

Դերենիկ Դեմիրճյանը ոչ միայն մեծ ու բազմաժանր գրող էր, հատկապես ականավոր արձակագիր ու դրամատուրգ, այլև տաղանդավոր քննադատ, գրականության ու արվեստի տեսաբան, ինչպես մշակութային, այնպես էլ հասարակական-քաղաքական թե՛ տեղական և թե՛ միջազգային բազմաբնույթ ու այլազան երևույթների խորագնին վերլուծաբան ու մեկնաբան: Սա եթե ոչ եզակի, ապա սակավ պատահող շնորհ է, որով օժտված են լինում քչերը:

Հայ քննադատական մտքի պատմության մեջ Հովհ. Թումանյանից հետո առանձնանում է հատկապես Դ. Դեմիրճյանը՝ իր ընդգծված տեսական մտածողությամբ, վերլուծական խոր մտքով, բազմակողմանի զարգացածությամբ ու լայն հետաքրքրություններով: Դրա հետ նա ուներ իր ինքնատիպ մտածելակերպն ու ոճը, քննության ուրույն մեթոդը:

Դեմիրճյան քննադատի միտքը սուր ու խորաթափանց էր, ինչպես նրա ակնախոռոչներում աշխուժորեն շարժվող մանր ու խելոք աչքերի ծակող հայացքը: Իմաստուն մարդու և ստեղծագործողի գրականագիտական խոհերն ու դիտողությունները միշտ դիպուկ էին, չափազանց հետաքրքիր և յուրօրինակ: Բնածին օժտվածությունը՝ հզոր տաղանդով ու մեծ խելքով, ոչ միայն գեղարվեստական, այլև տեսական մտածողությամբ, ինչպես գրողի, այնպես էլ քննադատի ձիրքով, Դեմիրճյանին հնարավորություն էին տալիս տարբեր առիթներով, ըստ հարկի, հմուտ մասնագետի արհեստավարժությամբ հանդես գալ գրականության և արվեստի բոլոր հարցերի վերաբերյալ և միշտ ասել իր խոր ու ծանրակշիռ խոսքը:

Համաշխարհային մշակույթին քաջածանոթ Դեմիրճյանը հրաշալի գիտեր հատկապես հայ գրականությունը, ճարտարապետությունն ու մանրանկարչությունը, թատրոնն ու երաժշտությունը: Ըստ որում, գրողի այդ բազմակողմանի զարգացածությունն արտահայտվում էր նրա ոչ միայն հոդվածներում, այլև գեղարվեստական երկերում:

Դեմիրճյանն ուներ գրականագիտական հայացքների իր կայուն համակարգը, արվեստագիտական սկզբունքների իր կոդեքսը, որոնցով էլ հետևողականորեն ղեկավարվում էր ստեղծագործական ու քննադատական բեղմնավոր գործունեության ընթացքում: Կասկածից վեր է, որ նրա աշխարհայացքը և գեղագիտությունը, կյանքի ու ստեղծագործական աշխատանքի մասին ունեցած պատկերացումներն ու համոզմունքները նախապես ձևավորվել էին անցյալ դարասկզբի և 1910-ական թվականների հայ գեղարվեստական ու տեսական մտքի քուրայում և առաջին հերթին, թումանյանական Վերնատան մթնոլորտում ու

մինչև վերջ իրենց վրա կրում էին նրա անջնջելի կնիքը: Եվ բնավ զարմանալի չէ, որ մեր մեծ գրողների միջավայրում գրական ուսումնասիրության շրջանն ապրած Դեմիրճյանն իր ստեղծագործական ողջ կյանքում հավատարիմ մնաց ռեալիզմի ու ժողովրդայնության սկզբունքներին, դասական գրականության ավանդույթներին:

Իր ստեղծագործական երկարատև կյանքի ու գործունեության ընթացքում Դեմիրճյանը գրել է գրականագիտական, արվեստաբանական ու հրապարակախոսական մեծաքանակ հոդվածներ և ուսումնասիրություններ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի հետաքրքիր է ու արժեքավոր: Այսուհանդերձ, գրողի քննադատական մեծահարուստ վաստակի մեջ կան առանձնապես նշանակալիները: Դրանցից են «Սասունցի Դավիթ» էպոսին նվիրված նրա խոր ու տարողունակ չորս հոդվածները[1], որոնցում մասնագիտական բանիմացությամբ ու խորաթափանցորեն գրողը բացահայտում է ժողովրդական հանճարեղ ստեղծագործության իմացաբանական-գեղագիտական բարձր արժանիքները: Դեմիրճյանը, թերևս, ավելի քան մեկ ուրիշը կարողացել է հասու լինել էպոսի բուն էությանը, պեղել նրա կենսական-գաղափարական մեծահարուստ բովանդակության մարդկային-հոգեբանական, կենցաղային-ազգագրական և մանավանդ աշխարհայացքային ու բարոյափիլիսոփայական շերտերը:

Ականավոր մտավորականը «Սասունցի Դավիթը» համարում է մեր ժողովրդի պատմությունը և փիլիսոփայությունը, նրա կեցությունն ու աշխարհայացքը, դարավոր փորձի և իմաստության խտացումը: Ուշագրավ է նաև նրա այն դիտարկումը, թե էպոսում հայությունն իր պատկերի նմանությամբ է կերտել դրական հերոսներին, նրանց մեջ խտացրել ազգային սեփական նկարագրի լավագույն գծերը. և ամենից առաջ աշխատանքի ու արարչության պաշտամունքը, աշխարհաշեն ոգին, ազատասիրությունն ու քաջությունը, բարությունն ու խաղաղասիրությունը, բոլոր և հատկապես դրացի ազգերի հետ հաշտ ապրելու անկեղծ ձգտումը, պատերազմի ժամանակ, կռվի թոհուբոհում անգամ, նվաճողի և բռնությամբ մարտի դաշտ բերված աշխատավոր մարդկանց, Մսրա Մելիքի և իր զինվորների մեջ հավասարության նշան չդնելու այն ժամանակների համար անհավատալի իմաստնությունն ու առաքինությունը, որ ի սկզբանե հատուկ է եղել հայ ժողովրդին:

Իր հոդվածներում Դեմիրճյանն այն հետաքրքիր միտքն է արտահայտում, թե «Սասունցի Դավիթը» ստեղծվել է ոչ թե միանգամից, անհող տարածության մեջ, այլ հոգևոր կուտակումների բազմադարյա դաշտում, հատկապես անցյալի բանահյուսական-մշակույթի հարուստ ավանդների հիման վրա և, ըստ այդմ, իրեն նախորդող հնագույն ու հին հայկական էպոսների՝ «Հայկ և Բելի», Փավստոս Բուզանդի հաղորդած «Պարսից պատերազմի», Հովնան Մամիկոնյանի մեզ ավանդած «Տարոնի պատերազմի» շարունակությունն է: Հայաստանի տարեգ-

---

[1] *«Սասունցի Դավիթ»-ը բազմադարյան կյանքի ստեղծագործություն», «Սասունցի Դավիթ»-ը որպես հայ ժողովրդի պատմություն և փիլիսոփայություն», «Մի ֆանտազիա «Սասունցի Դավիթ»-ի առիթով», «Սասունցի Դավիթ»-ի պոետիկան և պատկերները վերնագրերով հոդվածները տե՛ս* Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն. *Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 8 (լրացուցիչ), Երևան, 1963, էջ 148–169:*

ության նախորդ շրջաններին վերաբերող ժողովրդական այդ վեպերը գրողի կարծիքով եղել են հայոց մեծ էպոսի այն սկզբնաղբյուրները, որոնցից անվերջ սնվելով, զորացել ու հասակ է առել նա: Դեմիրճյանը կարծում է, որ «Սասունցի Դավիթը» ոչ միայն մեր հին դյուցազներգությունների հաջորդական փուլն ու զարգացումն է, այլև նրանց հետ մի ներդաշնակ ամբողջություն է կազմում՝ դրանով իսկ իր մեջ խտացնելով ողջ հայոց պատմությունը և ոչ թե նրա մեկ կամ մի քանի դրվագները: Սրան համապատասխան էլ մեր մեծ էպոսի հերոսները ոչ թե մի որոշակի ժամանակաշրջանի, այլ հազարամյակների ներկայացուցիչներն են:

Ժողովրդական ստեղծագործության խոր ու համակողմանի վերլուծությամբ Դեմիրճյանը բացահայտում է ոչ միայն նրա կենսական-գաղափարական հարուստ բովանդակությունը, այլև գրական բարձր մակարդակը: Մանրակրկիտ քննության առնելով էպոսի պոետիկան՝ լեզուն և ոճը, համեմատություններն ու մակդիրները և առհասարակ, պատկերային ողջ համակարգը, գրողն ի ցույց է դնում մեր ազգային արարչության այդ բացառիկ վիպական կոթողի բոլոր արժանիքներն ու յուրահատկությունները: Գիտական լուրջ ուսումնասիրության կշիռ ունեցող իր այս հոդվածներում Դեմիրճյանը «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը ներկայացնում է որպես հայ ժողովրդի ծանր ու դժվար, երբեմն ուղղակի ողբերգական, բայց և միաժամանակ հերոսական պատմության, ազնիվ ու մարդասիրական գոյափիլիսոփայության և հոգեբարոյական վեհության գեղարվեստական շքեղ հուշարձան, իբրև նրա ստեղծագործական հանճարի ամենագորեղ պոռթկումներից մեկը:

Դեմիրճյանի քննադատական ժառանգության մեջ բացառիկ արժեք են ներկայացնում Հովհ. Թումանյանին նվիրված հոդվածները: Հայ մեծագույն բանաստեղծի մասին գրողն առաջին անգամ արտահայտվել է 1933-ին՝ «Թումանյանի ստեղծագործության մի բնորոշ կողմը» հոդվածում[2]: Դեմիրճյանն այստեղ զարմանալի ճշգրտությամբ ներկայացնում է իր գրչեղբոր պոեզիայի հիմնական թեմատիկան, հեղինակի խոհերի ու հույզերի աշխարհը, մշտաբորբոք մորմոքով լցնող այն հարատև ցավն ու կսկիծը, որ բնորոշ է հատկապես նրան: Իմաստուն գրողի և մտածողի սուր, խորաթափանց հայացքը Թումանյանի ստեղծագործությանը բնորոշ մոտիվների և գաղափարների հարուստ ու բազմազան շղթայում նկատում և առանձնացնում է առավել տիպականը, գլխավորն ու մանավանդ առանցքայինը: Նշելով, թե ամեն մի բանաստեղծի ստեղծագործությունը հենց ինքն է՝ հեղինակը, որ «Երևան է գալիս նախ իր խղճի ձայնով, իր երգով և ապա իր սրտակից ժամերի զրույցներով», հոդվածագիրը համարում է, որ «Թումանյանի լեյտմոտիվը պերմանենտ զանգատն է իր հալածանքից»: Ընդգծելով, որ իրենց՝ հայ գրողների ավագ գրչեղբայրը և գրական առաջնորդը ոչ միայն հոռետես չէր կամ թույլ՝ կյանքի դժվարություններին դիմագրավելու, այլև իբրև բանաստեղծ ու հասարակական գործիչ «ուներ որոշ տակտիկա և ուժ պայքարի համար», Դեմիրճյանը հատուկ կարևորում է այն ի-

[2] *Նույն տեղում, էջ 69:*

րողությունը, որ այդուհանդերձ, «նա շարունակ գանգատվում էր կյանքից, նրա մշտուրախ աչքերում սակայն շողում էր մի հարատև թախիծ, դա ներքին Թումանյանն էր»: Բանաստեղծի մարդկային էության այս ակնհայտ երկվությունից մեկնելով, հոդվածագիրը կատարում է նրա պոեզիայի սոցիալ-հոգեբանական ու գեղարվեստական խոր վերլուծությունը:

Դեմիրճյանն իրավացիորեն գտնում է, որ հայ մեծ պոետի ողջ ստեղծագործությունը, անգամ թարգմանական գործերի բնորոշ մասը «կրում է նույն հալածանքի կնիքը»: Զարգացնելով իր այս հետաքրքիր միտքը, նա այնուհետև ավելացնում է, որ հալածանքի, հալածական հերոսի գլխավոր թեմայից բացի «ինտիմ Թումանյանի հոգեկան աշխարհը մշտական հուզված է մի հերոսի բախտով, դա Համլետն է»: Շեքսպիրյան այդ հմայիչ կերպարի իդեալը, ըստ հոդվածագրի, բանաստեղծի հայրն էր, ում նա մեծարում էր մի բառով. «նա մի մարդ էր»: Նշելով, որ «այդ մարդը Թումանյանի իդեֆիքսն էր», Դեմիրճյանն այն միանգամայն ճիշտ և հետաքրքիր դիտարկումն է անում, որ, իսկական, կատարյալ մարդու հաստատումն ու պանծացումը, ինչպես և դրա գեղեցիկ ու հարատև երազանքը («Երնեկ նրան, ով մարդ կգա և մարդ կգնա անարատ») մեծ բանաստեղծի ստեղծագործության մյուս գլխավոր թեման է, այն առանցքային գաղափարը, որ ողջ կյանքում հուզել է նրան: Մանավանդ որ Թումանյանի սիրած ու մտովի փայփայած հերոսները, այդ խեղճ ու անբասիր մարդիկ, ինչպես նշում է հոդվածագիրը, սովորաբար հալածված ոչնչանում էին: Ու թեև պոետի որոշ կերպարներ էլ և, հատկապես, Սասունցի Դավիթը, «հալածվելով չեն ընկրկում, այլ դիմագրավում են և մարտնչելով ի վերջո հաղթում», բայց հաստատում են ոչ թե հարատև ու անիմաստ, այսինքն միայն ադետաբեր պայքարի, պատերազմի ու ավերի, այլ տևական խաղաղության գաղափարը:

Եվ դա բնավ էլ պատահական չէր, քանզի Թումանյանը տերությունների և ժողովուրդների հաշտ ու բարեկամական գոյակցության ջատագովն էր և իր այդ միտքն արտահայտում է այլ գործերում նույնպես՝ հանգելով արդեն այն բոլորովին նոր ու անսպասելի հետևությանը, թե հանուն իդեալի, ինչ-ինչ բարձր նպատակների համար մղվող պայքարն անհատների, դասակարգերի և ազգերի միջև երբեք արդյունք չի տա, քանի դեռ չի փոխվել մարդն ինքը, որ տակավին շատ հեռու է կատարելությունից: Այդ են հաստատում բանաստեղծի այս իմաստուն, մարգարեական խոսքերը.

Բերանն արնոտ մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան:

Նույն այդ հոդվածում Դեմիրճյանն այնուհետև նշում է, որ թեև Թումանյանն ունի դաժան իրականության այդ սթափ գիտակցությունը և գիտի, որ «մարդը դեռ մարդ չէ, դեռ հեռու է մարդ դառնալուց», բայց լինելով իդեալիստ և չգտնելով իր իդեալը կյանքում, ձգտում է «հեռուն-Արևելքի եդեմների պայծառ իրիկունները, ուր հեքիաթական պալատներում սպասում էին իր հոգուն», քանզի ինքը «աստվածային մի ճամփորդ է տիեզերքում»:

Հետաքրքիրն այն է, որ խորաթափանցորեն վերլուծելով Թումանյանի ստեղծագործությունը, բացահայտելով նրա գլխավոր թեմաներն ու գաղափարները, բնութագրելով բանաստեղծին սեփական գործերով և իր իսկ բառերով, Դեմիրճյանն ինքն էլ իր հերթին հանգում է գոյափիլիսոփայական լուրջ հետևություններ: Հայոց մեծ պոետի բնորոշ երկերը, ինչպես և արտահայտած մտքերը նկատի ունենալով, ելնելով հատկապես մարդագիտական հարցերում նրա ունեցած խորախորհուրդ բանաստեղծական մտորումներից («Բերանն արնոտ մարդակերը էն անբան») Դեմիրճյանն ավելի առաջ է գնում՝ անելով դրանցից տրամաբանորեն բխող իր առավել բացորոշ ու կտրուկ հետևությունները. «Պայքարն օգուտ չունի, պայքարը չի վճռի խնդիրը, մարդը դրանով չի երջանկանա, մարդը պիտի ներքուստ ինքն իր մեջ փոխվի»[3]: Առավել ուշագրավն այն է, սակայն, որ Թումանյանի հանճարեղ կռահումներն իրենց արձագանքն են գտնում իր գրչակից ընկերների ոչ միայն տեսական դատողություններում, այլև գրվածքներում դառնում նրա գրական համախոհների, Վերնատան եռանդուն անդամների՝ Լևոն Շանթի ու Դերենիկ Դեմիրճյանի իդեֆիքսը, մասնավորապես այս երկուսի դրամատուրգիական ստեղծագործության առանցքային գաղափարներից մեկը: Հեղափոխական պայքարի անիմաստության և մարդու ներքին վերափոխման, բարոյական ինքնակատարելագործման անհրաժեշտության քարոզը ցայտուն արտահայտվել է հատկապես Շանթի «Շղթայվածը» դրամայում:

Հետագայում գրած իր հոդվածներում[4] («Թումանյանի արվեստի մի հատկությունը», «Հովհաննես Թումանյանի պոեզիան») Դեմիրճյանը հմտորեն շարունակում է իր թումանյանագիտական մեծարդյունք որոնումներն ու բանաստեղծի ստեղծագործության ավելի խոր ոսկե շերտերի պեղումները:

Անձամբ մոտ լինելով մեծ բանաստեղծին և խորապես զգալով ու հասկանալով նրա հրաշալի երկերը՝ Դեմիրճյանը, բնականաբար, իր ավագ գրչեղբոր և նրա ստեղծագործության մասին ասել է այն, ինչ որ և ինչպես որ միայն ինքը կարող էր ասել՝ եզակիորեն ճշգրիտ ու դիպուկ, խորն ու իմաստուն: Թումանյանի պոեզիայի առավել ցայտուն առանձնահատկությունը և ամենամեծ արժանիքը նա համարում է ժողովրդականությունը, դեմոկրատիզմը և կյանքի խոր ու անմիջական ճանաչողությունից բխող «յուրահատուկ ռեալիզմը»: Դեմիրճյանն իրավացիորեն զարմանալի նմանություն, գրեթե նույնություն է տեսնում մեծ բանաստեղծի անձի և գործի, նրա հասարակական ու ազգային բուռն գործունեության և խորապես մարդասիրական ստեղծագործության միջև ու նշում, որ մեկը պայմանավորված է եղել մյուսով: Գրողը ցույց է տվել, որ Թումանյանը ոչ միայն ազգային մեծ բանաստեղծ էր, այլև հասարակական խոշոր գործիչ, ժողովուրդների բարեկամության և հաշտ ու խաղաղ կյանքի կրքոտ քարոզիչ, հայության հոգևոր կյանքի առաջնորդ:

Դեմիրճյանն իր վերոնշյալ հոդվածներում բացահայտում է մեծ լոռեցու ստեղծագործության ամենահատկանշական և առավել արժեքավոր կողմերը, մասնա-

---

[3] *Նույն տեղում, էջ 72:*

[4] *Նույն տեղում, էջ 131, 135:*

վորապես նրա գրելաձևի խիստ ինքնահատուկ ու ամենաթանկ արժանիքը՝ «վսեմ պարզությունը»: Եվ, իրոք, դժվար է չհամաձայնվել այն ակնհայտ և ամենքի համար հասկանալի իրողության հետ, որ Թումանյանը կախարդիչ է, մեծ ու անկրկնելի առաջին հերթին իր բյուրեղյա պարզությամբ և … անդնդային խորությամբ: Հանճարեղ բանաստեղծի ստեղծագործության գերող յուրահատկություն է համարում բացառիկ խտացածությունն ու սեղմությունը: Դեմիրճյանը նշում է, որ ի տարբերություն իրենից առաջ և իր ժամանակ ժողովրդական համարվող հեղինակների (Պռոշյան և այլոք), որոնք իրականում երկարաբան ու պարզունակ գյուղագիրներ էին, Թումանյանն էր իսկական ժողովրդական գրողը, քանզի իր գրվածքներում հետևել է բուն ժողովրդական ստեղծագործական ոգուն և ոճին ու միշտ եղել է թե՛ պարզ և իմաստուն, թե՛ հակիրճ ու բյուրեղացած:

Դեմիրճյանը մեր մեծագույն բանաստեղծին բնութագրել ու արժեքավորել է նրա ստեղծագործության կենսական-գաղափարական բովանդակության և գեղարվեստական առանձնահատկությունների նուրբ զգացողությամբ: Ճիշտ նույնպիսի խորիմացությամբ ու հմտությամբ նա մեզ ներկայացնում է նաև իր մյուս ընկերոջ ու հանճարեղ գրչակցի՝ Ավետիք Իսահակյանի անձն ու գործը: Իր մի հոդվածում («Իմաստուն կյանք»)[5] և ապա գրողի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյում կարդացած զեկուցման մեջ նա խորազնին քննության է ենթարկում մեծ վարպետի ստեղծագործությունը, գնահատում նրա տեղն ու դերը հայ պոեզիայի անդաստանում:

Մեր ազգային երկու մեծ բանաստեղծների անձի ու ստեղծագործության մասին Դեմիրճյանի խոսքը մի առանձնահատուկ նշանակություն ու բացառիկ արժեք ունի, քանզի այն ասում է ոչ այլ ոք, քան Թումանյանի և Իսահակյանի մտերիմն ու գրչեղբայրը և մեծատաղանդ գրողն ու խորաթափանց քննադատը:

Նշանավոր գրողն ու քննադատը իր երկար կյանքի ընթացքում առիթից առիթ (հատկապես տարելիցներ) արտահայտվել է հայ գրականության նաև մյուս երևելի դեմքերի մասին: Բացառիկ արժեք է ներկայացնում Խ. Աբովյանին նվիրված հոդվածը («Ժողովրդից կանչվածը»)[6], որում նա ընդամենը մի քանի էջում տալիս է մեր մեծ լուսավորչի ստեղծագործության և առաջադիմական, ժողովրդանվեր գործունեության սեղմ ու սպառիչ վերլուծությունը և գնահատականը: Արժեքավոր են նաև Մ. Նալբանդյանին, Ղ. Աղայանին, Ալ. Շիրվանզադեին, Գ. Սարյանին նվիրված հոդվածները, որոնք աչքի են ընկնում այդ գրողների ստեղծագործության համոզիչ ու յուրատիպ բնութագրումներով և արժեքավորումներով: Եվ դա բնական է, քանզի դասական ու ժամանակակից հայ գրականությունն իր ամենաերևելի դեմքերով միշտ էլ եղել է Դեմիրճյանի սիրո և հետաքրքրությունների գլխավոր առարկան ու քննադատական հոդվածների առանցքային թեման: Լինելով իր օրերի հոգսերով ու ստեղծագործական խնդիրներով ապ-

[5] *Նույն տեղում, էջ 283:*
[6] *Նույն տեղում, էջ 311:*

րող գրող և մտածող, նա պարբերաբար ու կրքոտ ձևով արձագանքում էր գրական և առհասարակ մշակութային կյանքի երևույթներին:

Չափազանց լայն էր Դ. Դեմիրճյանի գրականագիտական ու քննադատական հետաքրքրությունների շրջանակը: Նա հոդվածներ էր գրում ոչ միայն դասական ու ժամանակակից հայ գրողների մասին, այլև հանդես էր գալիս գեղարվեստական վարպետության, ստեղծագործական ու ժանրային այլևայլ հարցերի («Առակի մասին», «Գեղարվեստական ակնարկ-վեպ», «Տիպ և խարակտեր», «Գրողը և կյանքը» և այլն), գրողի քաղաքացիականության («Գրողի հասարակական պարտքը») վերաբերյալ իր արժեքավոր խորհրդածություններով[7]: Խորապես շահագրգռված լինելով մեր գրական հերթափոխի ապահովման խնդիրներով՝ նա բացառիկ սեր ու հոգածություն է դրսևորում երիտասարդ հեղինակների ստեղծագործական ուսումնառության և աճի նկատմամբ: Ու պատահական չէ, որ Դեմիրճյանը բազմիցս հանդես էր գալիս իրեն հուզող այդ հարցերին նվիրված զեկուցումներով ու հոդվածներով («Սկսնակ գրողներին», «Երիտասարդ արձակագիրներ», «Երիտասարդ գրողներին»)[8], որոնցում խիստ ուսանելի և օգտակար խորհուրդներ ու խրատներ է տալիս գրական նոր սերնդին: Այդ գրավոր ու բանավոր ելույթներում գրողն իր լսարանին հաղորդում է գրականագիտական հայտնի և անհայտ ճշմարտություններ, գեղարվեստական վարպետության ծանոթ ու անծանոթ կանոններ՝ ելակետ ունենալով ոչ միայն իր հարուստ գիտելիքները, տեսական հանրահայտ դրույթները, այլև զուտ իր ստեղծագործական մեծ փորձից արված արժեքավոր հետևությունները, որոնք հենց այդ պատճառով էլ չափազանց օգտակար էին և գործնական արժեք ու կիրառություն կարող էին ունենալ: Իր հոդվածներում, զեկուցումներում ու զրույցներում մեծ ուշադրություն դարձնելով գեղարվեստական վարպետության ու գրական արհեստավարժության հարցերին, Դեմիրճյանը շատ էր կարևորում նաև գրողի կենսաճանաչողությունը, ժամանակի զգացողությունը, քաղաքացիականությունը: Նա գտնում էր, որ ստեղծագործողը ոչ միայն լավ պետք է իմանա կյանքը և մարդկանց, այլև հարկ է, որ ապրի իր դարաշրջանի ու սեփական երկրի խնդիրներով, ժողովրդի շահերով, հույսերով և տենչերով:

Դեմիրճյանը մեծ ու շահագրգիռ հետաքրքրություն է ցուցաբերել ռուս դասական ու ժամանակակից գրականության նկատմամբ: Գրողը սիրել է այն, խորապես ուսումնասիրել և կրել նրա բարերար ազդեցությունը: Իբրև բանաստեղծ, շատերի նման ունեցել է Ա. Պուշկինի ու Մ. Լերմոնտովի պաշտամունք, բայց որպես արձակագիր և մանավանդ երգիծաբան ու դրամատուրգ մի առանձին սեր է տածել Մ. Սալտիկով-Շչեդրինի ու մասնավորապես Ն. Գոգոլի նկատմամբ, շատ բան է սովորել նրանցից: Դեմիրճյանը խորապես ուսումնասիրել է իր համար հարազատ այս գրողների ստեղծագործությունը, միջամուխ եղել գրական այդ հսկաների արվեստի առանձնահատկություններին ու նրբություններին և դա անխուսափելիորեն իր որոշակի արտահայտությունն է գտել նրա երգիծական

---

[7] *Նույն տեղում, էջ 467, 488, 541, 564, 581:*

[8] *Նույն տեղում, էջ 338, 564, 589:*

արձակում ու մանավանդ կատակերգություններում («Քաջ Նազար», «Նապոլեոն Կորկոտյան»): Լինելով բնատուր հզոր տաղանդ, հայ գրողը, սակայն, իր նախասիրած այդ մեծ ստեղծագործողների ազդեցությանը կուլ չի գնացել և արարել է յուր արժեքավոր ու ինքնատիպ երգիծական և դրամատուրգիական երկերը: Ու բնորոշ է, որ Ն. Գոգոլի և Մ. Սալտիկով-Շչեդրինի երկերը մանրակրկիտ ուսումնասիրած, նրանց գեղարվեստական վարպետության գաղտնիքները վերծանած ու յուրացրած Դեմիրճյանը վերջիններիս մասին գրել է արժեքավոր հոդվածներ: Դրանցում հմտորեն բացահայտել է այդ ռուս մեծ գրողների ստեղծագործության գաղափարական ու գեղարվեստական ողջ հարստությունը, նրանց երգիծական և կատակերգական արվեստի առանձնահատկությունները: Այս տեսակետից արժեքավոր է հատկապես «Մեռած հոգիների լեզուն ու ոճը»[9] հոդվածը, որը Գոգոլի ստեղծագործության պոետիկայի մի փայլուն ուսումնասիրություն է և վկայում է Դեմիրճյանի ոչ միայն խորիմացությունը, այլև գրական «արյունակցությունը» իր սրտին շատ մոտ, իր ստեղծագործական խառնվածքին հարազատ ռուս գրողին:

Ուշագրավ է նաև Ա. Չեխովի մասին Դեմիրճյանի գրած հոդվածը[10], որում նորից բացառիկ նրբազգացությամբ բացահայտված է ռուս գրականության մեկ այլ հանճարի զարմանալիորեն հմայիչ, խորապես մարդասիրական ու բանաստեղծական ստեղծագործության ռոմանտիկական շունչը, լավատեսական ոգին և ինքնատիպությունը: «Պուշկինի մահվան 90-ամյակի առթիվ» ու «Պուշկինը և հայ կուլտուրան» հոդվածներում[11] գրողը գնահատանքի ու մեծարման իր սրտաբուխ խոսքն է ասել նաև «ռուս մեծագույն բանաստեղծի» և հայ մշակույթի վրա նրա ունեցած ազդեցության մասին: Դեմիրճյանը արժեքավորում է ռուս գրականության պատմության մեջ Պուշկինի կատարած վիթխարի դերը, մանավանդ նրա ստեղծագործության բարերար ազդեցությունը XIX դարի և հետագա շրջանի հայ պոեզիայի, մասնավորապես մեր նոր, ժողովրդական բանաստեղծության, նրա մեջ դեմոկրատական ուղղության ձևավորման ընթացքի վրա:

Ինքնատիպ դիտարկումներով ու դիպուկ բնութագրումներով հարուստ են Մ. Գորկուն[12], Մ. Շոլոխովին[13] նվիրված հոդվածները: Ուշագրավ է նաև «Ասքի մասին» հոդվածը[14], որում հայ մեծանուն գրողը վերլուծում, բնութագրում և ըստ արժանվույն գնահատում է ռուսական էպոսը, դրվատում նրա հայերեն թարգմանությունը, որ հմտորեն կատարել էր բանաստեղծ Սուրեն Վահունին: Ելնելով դյուցազներգության գաղափարագեղարվեստական մեծ արժանիքներից և ազատասիրական ու հայրենասիրական ոգուց, նա այն դասում է համաշխարհային գրականության նշանավոր գործերի շարքը, համարում մարդկության ստեղծած լավագույն էպոսներից մեկը:

---

[9] *Նույն տեղում, էջ 521:*
[10] *Նույն տեղում, էջ 547:*
[11] *Նույն տեղում, էջ 28, 316:*
[12] *Նույն տեղում, էջ 434:*
[13] *Նույն տեղում, էջ 569:*
[14] *Նույն տեղում, էջ 333:*

Իր հոդվածներում բազմիցս ընդգծելով հայ գրականության վրա ռուս մեծ գրողների ունեցած բարերար ազդեցությունը, Դեմիրճյանը չի մոռացել նրանց անգնահատելի ավանդը մեր մշակույթի եզակի գանձերի, մասնավորապես միջնադարյան հայ պոեզիայի ճշմարիտ արժեքավորման և համընդհանուր ճանաչման հասցնելու շնորհակալ գործում ու «Մի նոտա բրյուսովյան համերգից» հոդվածում[15] անկեղծ երախտիքի խոսք է ասել:

Դեմիրճյանի քննադատական ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում նաև խորհրդային շրջանի հայ նոր թատերագրության տեսական ու ստեղծագործական հարցերին նվիրված հոդվածները: Դրանցում նա անդրադառնում է գրական այդ կարևոր տեսակի զարգացման դժվարություններին ու խնդիրներին, անում է իր նուրբ և օգտակար դիտողությունները: Գրողն իր հոդվածներում կարևորում է նոր ձևավորվող դրամատուրգիան բարձր մակարդակի հասցնելու և առաջին հերթին գրական արժեք դարձնելու հարցը ու քննադատում է երկար ժամանակ իշխող հետամնաց, գավառական մտայնությունը, ըստ որի թատերգությունները բեմի համար են միայն: Նա մերժում է մանավանդ այս սխալ պատկերացմանը հետամուտ՝ պիեսներ չտպագրելու հրատարակչական դատապարտելի պրակտիկան, որ մեզանում կար ի սկզբանե և շարունակվեց շատ երկար ժամանակ: Դեմիրճյանը միաժամանակ քննադատում է մեր դրամատուրգիայի կենսական ընդգրկումների սահմանափակությունը՝ թատերագիրներից պահանջելով տեսադաշտի լայնություն, ստեղծագործական լուրջ խնդիրների ձեռք զարնելու խիզախություն:

1930-ական թվականներին բուռն կերպով քննարկվում էին դրամատուրգիայի նոր թեմատիկայի հարցերը և արտահայտվում տարբեր տեսակետներ: Դեմիրճյանի հայեցակետն այս դեպքում էլ շատ խորիմաստ էր ու ինքնատիպ: Նա գտնում էր, որ նոր թեման էլ կարող է շատ արագ հնանալ, եթե նա իր մեջ մնայուն, բոլոր ժամանակների համար հետաքրքիր ու արժեքավոր բան չի պարունակում: «Օրվա հրատապությունը պատկերող դրամատուրգը, եթե չի գտնում նրա այն օղակը,– գրում է Դեմիրճյանը,– որով այդ հրատապությունը կապված է էպոխայի հետ, անցնում է իր թեմայի հետ, հնանում է: Չեխովի թեմաները օրվա չարիքային են եղել իր էպոխայի մեջ: Բայց նա գտել է մնայուն օղակները, որով և կապել է այդ օրվա չարիքը ուրիշ էպոխաների հետ»[16]:

Դեմիրճյանը ռուս մեծ գրողի ստեղծագործության օրինակով թատերագիրներին հուշում է արդիական կյանքը պատկերող պիեսներին կայուն, հարատևող արժեք հաղորդելու գաղտնիքը: Նա միաժամանակ չի մոռանում ավելացնել, որ հնանում են ոչ միայն թեմաները, այլև դրանց մարմնավորման գեղարվեստական ձևերը և որպեսզի դա տեղի չունենա, պետք է խորացում և արվեստ, այսինքն կյանքի գերազանց ու համակողմանի ճանաչողություն և լիարժեք վերարտադրություն: Դրա համար էլ իր հերթին անհրաժեշտ է դրամատուրգիայի ա-

[15] *Նույն տեղում, էջ 85:*
[16] *Նույն տեղում, էջ 208:*

ռանձնահատկությունների խոր իմացություն և անընդհատ կատարելագործվող գրական վարպետություն:

Դեմիրճյանն իր մի հոդվածում («Թեմատիկայի խնդիրը»)[17] անդրադարձել է նաև թեմատիկայի հարցերին, որոնք 30-ական թվականներին հատկապես շատ էին կարևոր ու հրատապ: Գրողը գտնում էր, որ թատերագիրներն իրենց պիեսների նյութը պիտի վերցնեն անմիջականորեն կյանքից, այնտեղ ծավալվող պայքարից, քանզի միայն այդ դեպքում նրանք կկարողանան մարմնավորել նոր իրականության հերոսներին, փառաբանել ժողովրդի գործի նվիրյալներին և ընդհակառակը՝ ծաղրել հանրօգուտ աշխատանքից հեռու կանգնած ծույլերին ու քաղքենիներին: Խոսելով արդիական կյանքի պատկերման, հատկապես նրա հրատապ խնդիրներին արձագանքելու կարևորության ու առաջնահերթության մասին, Դեմիրճյանը միաժամանակ զգուշացնում է կրկնության և սխեմատիզմի վտանգից: Նա այն միտքն է արտահայտում, որ կյանքը պետք է պատկերել ոչ թե ծանոթ ու քարացած կաղապարներով, այլ թարմ, հետաքրքիր և միաժամանակ բազմազան գեղարվեստական ձևերով ու միջոցներով, ոչ թե մակերեսայնորեն, այլ խորությամբ ու գունագեղությամբ:

«Ֆոսֆորային շողի» բեմադրության առիթով Դեմիրճյանն այն կարծիքն է արտահայտել, թե պիեսում կամեցել է «հասարակական կյանքը դրսից տանել մի ընտանիքի մեջ», այսինքն՝ պատկերել կոնկրետ անհատների կեցության ու ճակատագրի միջոցով: Շարունակելով այս միտքը, գրողն այնուհետև նշում է, որ ինքը ջանացել է իր հերոսներին մարդկայնացնել, դրական գործող անձերի պայքարը սաստկացնել՝ նրանց հակառակորդներին ուժեղ դուրս բերելով և ոչ թե ցույց տալով թե ինչպես են համակրելի հերոսները հեշտությամբ ջախջախում մանեկեններին: Իր այս հոդվածում Դեմիրճյանը նշում է, որ «Ֆոսֆորային շող» պիեսում փորձել է կյանքը վերարտադրել խորացված ձևով, իր ամենաբնորոշ կողմերով ու տիպական կերպարներով և խուսափել իլյուստրատիվ, մակերեսային պատկերումներից: Նա զգուշացնում է հեռու մնալ զուտ քանակական լիակատարության ու թվացյալ բազմակողմանիության հասնելու, ամեն ինչ արտացոլելու, բոլոր հարցերին անդրադառնալու գայթակղությունից, ինչպես նաև տեխնիցիզմից: Գրողն իր ուրույն և միանգամայն ճիշտ կարծիքն է արտահայտել տվյալ ժամանակի համար բնորոշ, գրեթե մոդայիկ բազմամարդ տեսարանների մասին. «…մասսան բեմ տանել, նշանակում է բեմ տանել նրան ամբոխված վիճակի մեջ… ես կամեցել եմ բեմ տանել մասսայի ներկայացուցիչներին: … Մասսայի ներկայացուցիչն ավելի շատ տեղ ու ժամանակ ունի բեմի վրա բնութագրվելու ու համոզիչ դառնալու, քան ամբոխված վիճակում, ուր կորչում է նա «ուռաների» ու «կորչիների» մեջ: Բեմի էկոնոմիկան թույլ չի տալիս 50–60 մարդու բնութագրել»[18]:

Իր պիեսը բեմադրող Ա. Գուլակյանի հետ աշխատելիս նշանավոր գրողը մի ավելորդ անգամ համոզվում է, որ «դրամատուրգիան, գրականություն է և թատ-

---

[17] *Նույն տեղում, էջ 44:*

[18] *Նույն տեղում, էջ 52:*

րոն, թատրոնն իր հերթին և թատրոն է և գրականություն»[19]: Ելնելով այս անվիճելի իրողությունից՝ նա այն կարծիքն է հայտնում, թե ռեժիսորի հետ աշխատանքը, բեմարվեստի գաղտնիքների ու նրբությունների հետ ծանոթանալը խիստ օգտակար է դրամատուրգի համար: Շարունակելով իր այս միտքը Դեմիրճյանը թատերագրության հաջող զարգացման կարևոր պայման է համարում նաև դրամատուրգների ընդհանուր զարգացումը, սերտ կապն ու շփումը ոչ միայն կյանքի լայն շերտերի, այլև մշակույթի բոլոր բնագավառների, հատկապես գրականության ու թատրոնի հետ: Նշանավոր գրողը գտնում էր, որ դրամատուրգը չպետք է սահմանափակվի իր «սպեցիֆիկումի» մեջ, իր նեղ մասնագիտական շրջանակներում, քանզի առաջընթացի մայրուղի կարող է մտնել միայն ստեղծագործական այլ ասպարեզների հետ առնչվելով և իր հերթին նպաստելով դրանց փոխառնչությունների զարգացմանն ու խորացմանը: «Թատրոնն ու գրականությունը դրամատուրգիայի օղակով պետք է կապվեն իրար հետ»[20],– գրում է Դեմիրճյանը՝ գտնելով, որ թատերագիրը կարող է աճել ու հասունանալ ոչ միայն գրական միջավայրում, այլև բեմարվեստի մթնոլորտում:

Իր սիրած, իրեն հարազատ գրական տեսակի զարգացմամբ խիստ շահագրգռված գրողը մյուս կողմից հրատարակչությունների և քննադատության ուշադրությունն է հրավիրում դրամատուրգիայի վրա, որը ոչ միայն գրականության կարևոր սեռերից մեկն է, այլև անփոխարինելի դեր ունի թատրոնի ու կինոյի բնագավառում: Ելնելով այս իրողությունից՝ նա իրավացիորեն գտնում է, թե թատերագրության զարգացման համար անհրաժեշտ է որ այն տպագրվի, ապա արժանանա քննադատության պատշաճ ուշադրությանը:

Դեմիրճյանը դեմ էր դրամատուրգիայում գաղափարների մերկապարանոց դրսևորմանը, անհող, սնամեջ ռիտորիկային և իրավացիորեն գտնում էր, որ պետք է «իդեաները տալ պատկերների միջոցով, պատկերը բեմի վրա խարակտերն է»[21]: Գրականության ու մասնավորապես թատերագրության մեջ և թատրոնում խիստ կարևորելով անհատական ու սոցիալական գծերի խտացում եղող բնավորությունների դերը և նշանակությունը, նա մերժելով մերժում էր ժամանակի շատ պիեսներում հանդես եկող վերացական, անմարմին դրական հերոսներին, որոնք ընդամենը հեղինակի գաղափարների խոսափող էին: «Մարդ-խարակտերը հակառակ մարդ-սխեմային»՝ անզիջում պահանջկոտությամբ և անվերապահորեն հայտարարում էր Դեմիրճյանը՝ առաջնահերթ համարելով ոչ միայն ճշմարտացի ու հավաստի, այլև կենդանի և հյութեղ հերոսների կերտումը: Նա մասնագիտական այն նուրբ միտքն է արտահայտում, թե իսկական դրամատուրգիական կերպար ստեղծելու համար պետք է բացահայտել գործող անձի ինչպես բնավորությունը և սոցիալ-հոգեբանական ողջ հարստությունը, այնպես էլ մտքերի, հույզերի, կամքի ուղղությունը, նրա ողջ վարքագծի դինամիկան:

---

[19] *Նույն տեղում:*

[20] *Նույն տեղում, էջ 43:*

[21] *Նույն տեղում, էջ 54:*

Դեմիրճյանն այստեղ կարևորելով թատերագրության հերոսի ներաշխարհի բուռն ընթացքներն իրենց աստիճանական ուժգնացման ու սևեռուն նպատակաուղղվածության մեջ ցույց տալու անհրաժեշտությունը, ինքնաբերաբար արծարծում է թատերագրության ուղն ու ծուծը կազմող դրամատիզմի, այս դեպքում հատկապես ներքին դրամատիզմի հարցը: Ելնելով այն իրողությունից, որ բնավորությունը բացահայտվում է գործի մեջ, արտաքին հակամարտության ընթացքում, կյանքի կռվում, գրողն անմիջապես էլ շեշտում է, որ նա լիովին «փորձվում է սեփական հակամարտության մեջ»[22], այսինքն՝ ինքն իր հետ մղած պայքարում: Եվ սա միանգամայն ճիշտ է, քանզի սեփական հակամարտությունների հաղթահարմամբ կամ հանուն դրանց ճնշման գործադրած ջանքերի շնորհիվ է, որ կերպարը ներքին զարգացում է ապրում, նորանում, դառնում զգալիորեն ուրիշ մարդ: Դեմիրճյանը շատ է կարևորում գործող անձի համար պարտադիր այս էվոլյուցիան, որովհետև դրամատուրգիայի սպեցիֆիկումից բխող այն համոզումն ունի, որ պիեսում պետք է փոխվի ոչ թե միայն պայքարի ընթացքը, այլև պայքարողները: Ելնելով տեսական այս ճիշտ դրույթից, շատ պարզ, ինքնին հասկանալի այն ճշմարտությունից, թե դրամատուրգիական երկում պիտի փոխվի ոչ միայն իրադրությունը, այլև գործող անձն իր բուն էությամբ, Դեմիրճյանը որոշակիորեն գերապատվությունը տալիս է ներքին դրամատիզմին, վերջին հաշվով բնավորությունների դրամային, որի արգասավոր ուղիով էլ, ինչպես ինքն է իրավացիորեն կարծում, զարգանալու է նոր թատերագրությունը: Ավելի որոշակիացնելով իր գլխավոր միտքը, նա ուղղակի ասում է. «Պետք է թողնել դրությունների դրաման և անցնել խարակտերների դրամային»[23]:

1930-ական թվականներին թատերագրության հարցերին նվիրված քննարկումներում արծարծվում էին նաև ժանրային այլևայլ հարցեր, որոնք տարակարծությունների ու վեճերի առիթ էին տալիս: Մասնավորապես, խոսվում էր դրամատուրգիական նոր ժանրի ստեղծման մասին: Դեմիրճյանն այս անգամ էլ իր բնատուր ողջախոհությամբ, անմիտ ու անհեթեթ էր համարում նման հարցադրումն ու ցանկությունը: Նա իրավացիորեն գտնում էր, որ ոչ թե պետք է նոր ժանր ստեղծել, ինչի ոչ հարկը կա և ոչ էլ հնարավորությունը, այլ մինչև վերջ օգտագործել հին ժանրերի գեղարվեստական հարուստ ներուժը և կարելիության սահմաններում դրանք թարմացնել ու նորացնել՝ ելնելով ժամանակի պահանջներից:

Դեմիրճյանն իր հոդվածներում անդրադառնում է դրամատուրգիայի նաև այլ կարևոր հարցերի, բոլոր դեպքերում դրանց համար գտնելով զգաստ ու խելամիտ պատասխաններ: Իրեն բնորոշ լրջախոհությամբ ու իմաստնությամբ, նա երբեք չէր տարվում ժամանակի մոդայիկ, կեղծ նորարարական դրույթներով կամ ենթարկվում պետական-պաշտոնական թելադրանքին: Տեսական մարզանքներով զբաղվող որոշ քննադատների ծայրահեղ տեսակետները մերժող գրողը, ում հատուկ էր շուտափույթ և սխալ որոշումներ կայացնելուց խուսափե-

[22] *Նույն տեղում, էջ 55:*
[23] *Նույն տեղում, էջ 58:*

լու զգուշավորությունն ու հեռատեսությունը, մշտապես ղեկավարվում էր գրականության բնականոն զարգացման օրենքներով ու շահերով:

Դեմիրճյանը գտնում էր, որ կյանքը պետք է պատկերել ոչ միայն ճշմարտացիորեն, այլև խորությամբ, նոր դարաշրջանի համար տիպականը բացահայտելու, գեղարվեստական լայն ընդհանրացումներ կատարելու ճանապարհով: Նրա կարծիքով նման արդյունքի կարելի է հասնել միայն դրամատուրգիական հաջող, այսինքն, ճշմարտացի, կենդանի և հյութեղ գործող անձերի միջոցով: Գրողն այն միտքն է արտահայտում, թե ժամանակակից մարդուն պատկերելու համար անհրաժեշտ է ճիշտ լուծել նրա մեջ անհատականի ու հասարակականի փոխհարաբերության խնդիրը, այսինքն՝ դրանք նրբորեն, բնական համամասնությամբ միահյուսել՝ չվնասելով կերպարի հավաստիությունը: Գաղափարապես հագեցած, քաղաքականապես նպատակասլաց դրամատուրգիայի կողմնակից ու ջատագով լինելով, Դեմիրճյանը միաժամանակ մերժում էր անսքող միտումնավորությունը: Մյուս կողմից, գնահատելով նոր թատերագրությանը բնորոշ լավատեսությունը, գտնում է, որ այն պետք է լինի չափավոր ու բնական, կյանքի զարգացման իրական հեռանկարներից բխող և ոչ թե վերացական ու, ինչպես ինքն է ասում, «ճարճատուն»:

Ինչպես տեսնում ենք, թե՛ գրականության մյուս սեռերին, թե՛ դրամատուրգային վերաբերող տեսական-ստեղծագործական խնդիրների վերաբերյալ Դեմիրճյանն ուներ իր ուրույն պատկերացումները և գրական մեծ փորձից բխող գեղագիտական կայուն սկզբունքները ու երբեք չենթարկվեց ժամանակի ձախուծուռ տեսակետների վնասակար ազդեցությանը: Ընդհակառակը, նա մեր երկրի համար շատ բարդ ու դժվարին պատմաշրջանում սթափ մտածողության և իմաստուն ողջախոհության ուսանելի ու օգտակար օրինակներ էր ցույց տալիս: Եվ պատահական չէ, որ այդ բարդ ու խառնափնթոր ժամանակներում, երբ շատ էին թե՛ սխալները և թե՛ մանավանդ սխալվողները, Դեմիրճյանը գրեթե միշտ մնում էր անխոցելի: Ոչ միայն բնածին ողջախոհությունը և իմաստնությունը, զգուշավորությունն ու հաշվենկատությունը, այլև հայ դասական գրականության ավանդույթներով դաստիարակված լինելը գրողին հնարավորություն են տվել նրբորեն կողմնորոշվել հատկապես երեսնական թվականների գրական կյանքի բարդ ու հակասական, երբեմն իրարամերժ ընթացքների մեջ, միշտ ճիշտ ու անվրեպ պատասխաններ գտնել ժամանակի առաջադրած կնճռոտ հարցերին:

Ամենայն լրջությամբ ու հոգածությամբ ժամանակակից թատերագրության հարցերով զբաղվող Դեմիրճյանը չէր կարող աչքաթող անել նրա ոչ այնքան հեռավոր անցյալը: Մանավանդ որ դարասկզբին ինքը գրական-թատերական կյանքի հորձանուտում էր, ժամանակի գեղարվեստական ընթացքների մասնակիցը, տեղի ունեցող մշակութային կարևոր իրադարձությունների ականատեսն ու վկան: Եվ այս առումով բնավ զարմանալի չէ, որ գրողն առաջացած տարիքում անհրաժեշտություն զգաց անդրադառնալ իր ջահել օրերի անմոռաց ու թանկագին տպավորություններին: Նա գրեց «Հուշեր և խոհեր դրամատուրգիայի և

թատրոնի մասին»[24] *արժեքավոր երկը, որում ուրվագծել է մեր մշակույթի երկու քույր բնագավառների պատմությունը՝ նրանց միաձույլ զարգացման ամենակարևոր ու նշանակալից շրջանում (XIX դարավերջ և XX դարասկիզբ):*

Քննական-վերլուծական հենք ունեցող այդ հուշագրության մեջ Դեմիրճյանը, ներկայացնելով ժամանակի գրական-թատերական կյանքի ընդհանուր պատկերը, նախ ուրվագծում է դրամատուրգիայի զարգացման ընթացքը, բնականաբար, առանձնացնելով նրա գլխավոր դեմքերին, առավել տաղանդավոր ու վաստակավոր ներկայացուցիչներին: Գրողն ամենից առաջ անդրադառնում է Սունդուկյանին, բնութագրում ու արժեքավորում հայ դրամատուրգիայի և թատրոնի զարգացման գործում բացառիկ դեր խաղացած նրա ստեղծագործությունը: Նշելով հայ մեծագույն դրամատուրգի երկերի գաղափարական-գեղարվեստական արժանիքներն ու որոշ թերությունները (բարբառային լեզու, գործողությունների միօրինակ ու սահմանափակ միջավայր), Դեմիրճյանն այնուհետև անդրադառնում է մեր դասական թատերագրության երկրորդ խոշոր դեմքին՝ Շիրվանզադեին: Արժեքավորելով վերջինիս դրամատուրգիան և հավաստելով, որ նա զարգացրեց հայ բեմական գրականությունը պատմական նոր ժամանակաշրջանում, կարևորում է հատկապես թատերագրի բերած նորությունը: Դեմիրճյանն ընդգծում է, որ Շիրվանզադեն շարունակելով Սունդուկյանի ռեալիստական ուղղությունը, միաժամանակ մեր դրամատուրգիայում նոր շրջան սկզբնավորեց՝ ոչ միայն հրաժարվելով բարբառից և իր պիեսների տիրապետող լեզուն դարձնելով գրական հայերենը, այլև միաժամանակ լայնացնելով գործողությունների միջավայրը, հանդես բերելով նոր հերոսներ: Ներկայացնելով հայ դասական թատերագրության զարգացման բարդ ու դժվարին ընթացքը, հեղինակը, բնականաբար, ըստ հարկի անդրադառնում է և տվյալ ժամանակաշրջանում հանդես եկած մյուս դրամատուրգներին, թե՛ ռեալիստական ուղղության հետևորդներին (Վրթ. Փափազյան և ուրիշներ) և թե՛ այլ հոսանքների ներկայացուցիչներին՝ դրանով իսկ ուրվագծելով մեր բեմական գրականության զարգացման ողջ համապատկերը տվյալ պատմաշրջանում:

Դեմիրճյան մտածողի, քննադատի գիտական հետաքրքրությունների մեջ, գրականությունից հետո երկրորդ տեղը գրավում է արվեստը և, մասնավորապես, թատրոնը, որի հետ նա սերտորեն առնչված է եղել իր ողջ կյանքի ընթացքում: Գրողի թե՛ երիտասարդական և թե՛ հասուն տարիները զուգադիպել են հայ բեմարվեստի ամենածաղկուն շրջանին ու նա ստեղծագործական և բարեկամական սերտ կապերի մեջ լինելով ամենաերևելի թատերական գործիչների, ռեժիսորների ու դերասանների հետ՝ ձեռք էր բերել անչափ հարուստ տպավորություններ: Եվ շատ բան տեսած, մշակութային կյանքի մի ողջ պանծալի պատմաշրջան ապրած Դեմիրճյանն այդ ամենն անցկացնելով իր վերլուծական մտքի քուրայով, խտացրել է իր հուշագրության մեջ: Վերոհիշյալ, խիստ արժեքավոր այս երկում գրողը, ստեղծելով անցյալի մեր մշակութային կյանքի ոլորտներից մեկում տեղի ունեցող բարդ ու նշանակալից գեղարվեստական գործընթացների,

---

[24] *Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 6, Երևան, 1958, էջ 515:*

հետաքրքիր ու բազմազան երևույթների իրական ու գրավիչ պատկերը, միաժամանակ վերլուծում է բեմարվեստի ամենանշանավոր ներկայացուցիչների ստեղծագործությունը, բնութագրում նրանց արվեստը: Այս առումով չափազանց հետաքրքիր են ու արժեքավոր հայ մեծանուն դերասանների՝ Պ. Ադամյանի, Սիրանույշի, Հ. Աբելյանի, Վ. Փափազյանի, Ա. Արմենյանի, Գր. Ավետյանի, Իս. Ալիխանյանի, Հասմիկի, Օ. Գուլազյանի և այլոց մասին Դեմիրճյանի գրած էջերը: Նա ոչ միայն տալիս է մեր բեմարվեստի այս մեծերի ստեղծագործության, տաղանդի ու վարպետության, խաղառճի բնութագիրը, որոշում նրանցից ամեն մեկի տեղն ու դերը հայ թատրոնի պատմության մեջ, այլև զուգահեռաբար ու մեջընդմեջ արտահայտում է դերասանական արվեստի մասին իր չափազանց ինքնատիպ տեսակետներն ու պատկերացումները: Ըստ որում, դերասանի վարպետության, նրա խաղի նրբությունների վերաբերյալ Դեմիրճյանը գրում է նույնպիսի խորագիտակությամբ, ինչպես իրեն հարազատ գրականության, դրամատուրգիայի մասին:

Խորհրդային շրջանում ավելի ամուր կապված լինելով թատրոնին, որի խաղացանկը զարդարում էին իր պիեսները («Քաջ Նազար», «Նապոլեոն Կորկոտյան» և «Երկիր հայրենի»), նա երկար տարիներ համագործակցել է բեմադրիչների ու դերասանների հետ, եղել է թատերական կյանքի անմիջական ու ակտիվ մասնակիցը, գրել է նաև հոդվածներ («Դիմակահանդես», «Մեծատաղանդ արտիստը»)[25], բազմիցս ելույթ է ունեցել բեմարվեստի հարցերին նվիրված ստեղծագործական քննարկումներում: Ի դեպ, հենց իր՝ Դեմիրճյանի պիեսների բեմադրություններին նվիրված բուռն բանավեճերը ժամանակի մշակութային կյանքի ուշագրավ երևույթներից էին: Եվ այս ամենի հիման վրա աներկբա կարելի է ասել, թե գրականությունից հետո, գրողի ստեղծագործական երկրորդ էությունը, հոգևոր կյանքի հարազատ կեսը թատրոնն էր, որի ոչ միայն հոգատար ու պահանջկոտ քննադատն էր, այլև անխոնջ աշխատավորը: Չէ որ նա ամբողջ կյանքում գրում էր պիեսներ, որոնցից լավագույնները զարդարում էին մեր թատերական խաղացանկը:

Դրամատուրգիայի ու թատրոնի մասին Դ. Դեմիրճյանի գրած հոդվածները և մանավանդ վերոհիշյալ խոհավերլուծական հուշագրությունը գիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և առատաբուխ աղբյուր են ազգային մշակույթի այդ երկու բնագավառների պատմաբանների համար: Մյուս կողմից՝ նշանավոր գրողի հուշագրությունն առանձնապես արժեքավոր է այն պատճառով, որ մեր թատերագրության ու բեմարվեստի պատմության ամենափառահեղ շրջանի և մեծագույն դրամատուրգների ու դերասանների մասին է և այն էլ գրված անցյալի մշակութային կյանքի նշանավոր մասնակցի ու հետագա մեծ գրողի ձեռքով:

Դեմիրճյանին շատ հոգեհարազատ էր նաև երաժշտությունը, որը ոչ միայն սիրում էր, այլև զգում խորապես ողջ էությամբ: Մանավանդ որ նա ջութակահար էր ու ազատ ժամերին նվագում էր կրքոտ և ինքնամոռաց: Եվ բնավ պատահա-

[25] *Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն. Երկերի ժողովածու տասնչորս հատորով, հ. XIII, Երևան, էջ 37, 315:*

կան չէ, որ երաժշտության մեծ սիրահարը հենց սկզբից, տակավին քսանական թվականներին, երբ հազիվ դրվում էին խորհրդային մշակույթի հիմքերը, արագ և զգայուն արձագանքում է նոր, նախկինից տրամագծորեն տարբեր ժամանակահատվածում արվեստի իրեն առանձնապես հարազատ տեսակներից այս մեկի հետ առնչվող մտահոգիչ հարցերին: Այս առումով խիստ բնորոշ են ու հետաքրքիր Դեմիրճյանի «Կոնսերվատորիայի առաջին կոնցերտի առթիվ»[26] և մանավանդ «Ա. Ադամյանի «Ազգային երաժշտությունը» հոդվածի առթիվ»[27] հրապարակումները: Ուշագրավ է և արժեքավոր սրանցից հատկապես վերջինը, որում գրողը լրջորեն քննադատում է հեղինակի ժխտական կարծիքները հայկական և առհասարակ արևելյան երաժշտության մասին և եվրոպականին բացարձակ գերակայություն տալու հոռի միտումը: Դեմիրճյանը գտնում է, որ Երևանի կոնսերվատորիայի տնօրեն Ա. Ադամյանի արտահայտած մտքերը շատ դեպքում վիճելի են կամ սխալ ու մերժելի: Քննադատելով ու նրբորեն առարկելով հոդվածագրին, ժխտելով նրա արտառոց տեսակետները, գրողն ամեն կերպ պաշտպանում է մեր ազգային երաժշտության շահերը, հաստատում է նրա ինքնուրույն արժեքն ու գոյության իրավունքը: Եվ գնահատելին այն է, որ 20-ական թվականներին, երբ գրականության ու արվեստի տեսության բնագավառում գլուխ էին բարձրացրել վուլգար սոցիոլոգիական հոռի պատկերացումները, երբ ժամանակի անցողիկ հովերին տրված որոշ մասնագետներ (Ա. Ադամյան) արևելյան և նույն կարգին դասվող հայկական երաժշտությունը համարում էին հին, իրենց դարն ապրած հասարակարգերի գեղարվեստական արտադրանք և, ըստ այդմ, նոր կյանք կերտող ժողովրդի համար ոչ պիտանի, Դեմիրճյանն իմաստնություն և խիզախություն է հանդես բերում՝ հակադրվելու այդ վնասակար միտումներին և պաշտպանելու մեր ազգային-մշակութային թանկ արժեքները:

Դեմիրճյանն իր գրաքննադատական գործունեությանը զուգահեռ զբաղվել է նաև հրապարակախոսությամբ: Եվ դա հասկանալի է, քանի որ ինչպես հայրենասիրությունը, այնպես էլ քաղաքացիականությունը մեր նշանավոր գրողի ստեղծագործական ու մարդկային նկարագրի գլխավոր հատկանիշներն էին, նրա բնավորության հիմնական շաղախը: Բնականաբար, Դեմիրճյանը չէր կարող իր երկրի ոչ միայն մշակութային, այլև հասարակական կյանքի ակտիվ մասնակիցը չլինել, չապրել նաև աշխարհին ու մարդկությանը հուզող խնդիրներով: Եվ բնավ պատահական չէ, որ նա 20-ական թվականներից սկսած մինչև իր կյանքի վերջը միջազգային-քաղաքական թեմաներով գրում է ոչ միայն հրապարակախոսական հոդվածներ, այլև սրամիտ երգիծական ակնարկներ («Պուանկարեն և դարաքիլիսեցի բիձան», «Ազգերի լիգա - գայլերի լիգա», «Մուսսոլինի», «Անգլիան շահեր ունի», «Ամերիկան խաղաղություն է ուզում» և այլն)[28]: Դրանցում նա ծաղրում է պատերազմները և ժողովուրդների հաշտ ու խաղաղ գոյակ-

---

[26] *Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն. Երկերի ժողովածու տասնչորս հատորով, հ. XII, էջ 15:*

[27] *Նույն տեղում, էջ 26:*

[28] *Նույն տեղում, հ. V, էջ 44, 330, 385, 490:*

ցության դեմ ուղղված դավադրությունները, մեծ տերությունների աշխարհաքաղաքական նենգ խաղերը, պետական նշանավոր գործիչների դիվանագիտական ճակատարությունները: Ժամանակի հրատապ թեմաներով Դեմիրճյանի այդ կրքոտ ու արդիաշունչ երկերին բնորոշ է քաղաքացիական պաթոսը, սրամտությունն ու խայթող երգիծանքը: Իր այդ կրակոտ հրապարակումներով (թե՛ գեղարվեստական երկեր, թե՛ հոդվածներ) Դեմիրճյանը տասնամյակներ շարունակ պայքարել է հանուն դեմոկրատիայի ու սոցիալական արդարության, ընդդեմ բռնության ու պատերազմի: Դրանով իսկ նա մշտապես հանդես է եկել իբրև ողջ աշխարհի բարօրության և մարդկային երջանկության, համընդհանուր սիրո ու բարության և մշտնջենական խաղաղության համար մարտնչող աննկուն զինվոր:

Ինչպես տեսնում ենք, Դեմիրճյանն իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում գեղարվեստական երկեր արարելու հետ մեկտեղ զբաղվել է նաև եռուն քննադատական գործունեությամբ, կարդացել է զեկուցումներ, հանդես է եկել մեծաթիվ գրականագիտական ու արվեստաբանական, ինչպես և հրապարակախոսական հոդվածներով: Նա ոչ միայն խիստ զգայուն ձևով արձագանքել է հայ ժողովրդի պատմության ու ազգային ճակատագրի և հատկապես նրա մշակույթի բնագավառի (գրականություն, մայրենի լեզու, թատրոն, կինո, ճարտարապետություն, երաժշտություն) հուզող հարցերին և ամեն անգամ ասել իր լուրջ ու ծանրակշիռ խոսքը, այլև գրել մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի բազմազան երևույթների, միջազգային կարևոր իրադարձությունների մասին:

Աչքի առաջ ունենալով Դեմիրճյանի քննադատական և հրապարակախոսական եռանդուն, համակողմանի և մեծարդյուն գործունեությունը, տեսնում ենք, որ նա իր գիտակցական ողջ կյանքում եղել է գրական դիրքերում, իբրև անվեհեր մարտնչող և ուխտյալ զինվոր: Թե՛ որպես բազմաժանր գրող և թե՛ իբրև խորիմաց քննադատ, նա իր արժեքավոր լուման է ներդրել մեր նոր և նորագույն գրականության ու արվեստի ստեղծման և զարգացման մեծ ու շնորհակալ գործում: Ավելի քան կես դար այդ բարի ու իմաստուն մարդը և անխոնջ ստեղծագործողը, արդարամիտ ու կրքոտ քաղաքացին ուժերի ծայրահեղ լարումով և իսկական հայրենասերի անմնացորդ նվիրումով տքնում էր ի բարօրություն իր ժողովրդի:

Ի վերջո, չենք կարող չասել, որ Դեմիրճյանը ոչ միայն հայոց պատմության ու մշակույթի քաջահմուտ գիտակն էր, այլև նահրյան երկրի բնակիչների խիստ ինքնօրինակ ազգային բնավորության ու գոյափիլիսոփայության փայլուն վերլուծաբանն ու մեկնաբանը: Ըստ որում, այդ ճշմարտության մեջ համոզվելու համար բնավ էլ պետք չէ ի միտ առնել նրա նշանավոր ու ծավալուն երկերը, նամանավանդ «Վարդանանքը»: Բավական է կարդալ թեկուզ գրողի «Հայը» փոքրածավալ ու աննշան էսսեն[29], ուր նա հանճարեղ խորաթափանցությամբ բացահայտել է մեր ժողովրդի հոգեբարոյական նկարագրի ապշեցուցիչ պարադոքսները, տարօրինակ ու անմեկնելի թվացող, բայց իրականում գեղեցիկ ու վեհիմաստ առեղծվածները («Տեսե՞լ եք նրա բնակարանները, խլուրդի ծակուռ…, բայց անցիր

[29] *Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն. Երկերի ժողովածու տասնչորս հատորով, հ. XIV, էջ 461:*

նրա երկիրը: Ինչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր»: «Դիպլոմատիայի մեջ մի բանում է շատ հոգածու՝ անկեղծ լինել: Այնքան անկեղծ է և միամիտ, որ անկասկածելի խորամանկի տպավորություն է թողնում»: «Ուր հեղափոխություն՝ այնտեղ հայություն», «կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսավ և ինքն էր, որ չխրատվեց»: «Հայի ամենամեծ առաքինությունն ես ուզում. ամենաներողամիտն աշխարհիս մեջ: Ի՞նչ եղավ իր պատմությունը. զարհուրելի ջարդեր, խոշտանգում, բնաջնջում…»: «Ջարդիր ինձ,– ասում է նա,– ահա քո պատիժը և իմ վրեժը», «երբ նայում եմ հային, ինձ թվում է, թե նրա վիրավորանքն այն արծվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թպրտում է, ընկնում քարի, աղբի մեջ, կեղտոտվում, թևերը կոտրում: Կերակուր ես մեկնում չի ուզում: Չի սիրում ոչ ստրկություն, ոչ երջանկություն, գերադասում է տառապանք և ազատություն…: Գերի արծվի խոր վիշտն է իր սրտի մեջ: Սա Հայկն է, որին զրկել են իր կյանքի միակ պայմանից՝ ազատությունից»: «Ոչինչ չեմ ուզում ձեզանից,– ասում է նա իր նեղիչներին,– ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, գնացեք, ապրեցեք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը՝ ազատությունը…»)[30] *և տվել նրա եզակիորեն ճշգրիտ հոգեբանական բնութագիրը: Ընդամենը մեկ-երկու էջում հային այսքան անսպասելի, բայց և նրա ամենախոր ու ամենաբարձր էությունը, ոգեղեն հարստությունն ու ազնվականությունը բացահայտող կողմերից և այդպես դիպուկ, աֆորիստիկ խտություն ունեցող ու բյուրեղացած միտք-ընդհանրացումներով կարող էր ներկայացնել թերևս միայն ինքը՝ Դեմիրճյանը, մեծ հայն ու մեծ մտավորականը: Մարդ, որ, ասես, եկել էր մեր պատմության հեռավոր փոթորկաշունչ դարերից, հարազատ ժողովրդի բազմահազարամյա կյանքի անտիկ հնությունից, Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու և Եղիշեի ժամանակներից ու հոգևոր միջավայրից և իր մեջ խտացրել յուր ազգի դասական անցյալն ու հուսավառ ներկան, դժվար, բայց և արարչական կեցության ու դաժան ճակատագրի խորհուրդը ու դարձել նրա հավերժական երթի անբաժան ուղեկիցը:*

ДЕРЕНИК ДЕМИРЧЯН–КРИТИК

АРЦВИ УНАНЯН

Р е з ю м е

Несмотря на то, что Д. Демирчян жил и творил в советские годы, в отличие от многих, он не отдавал дань идеологическим догмам и заблуждениям, левацким теоретическим и эстетическим понятиям, всегда оставаясь верным традициям классической литературы, принципам народности и реализма. Великий писатель был талантливым литературоведом и искусствоведом, страстным публицистом и многие глубокие, содержательные его статьи, составляющие неотъемлемую часть своего богатого литературного наследия, очень ценны и поучительны для настоящего и будущего поколения нашей творческой интеллигенции.

[30] *Նույն տեղում, էջ 463:*